ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

«Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲ ընկերությունը ստորև ներկայացնում է իր կարիքների համար Գյումրիի կայանի H=180մ բարձրության հեռուստաաշտարակի և ալիքատար կամրջակների մետաղական կոնստրուկցիաների հակակոռոզիոն պաշտպանիչ շերտի վերականգնման, ներկման աշխատանքների /Աշխատանք/ ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀՌՑ-ԳՀԱՇՁԲ-19/34 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում կնքված 01.02.2020 թիվ ՀՀՌՑ-ԳՀԱՇՁԲ-19/34-1 պայմանագրում (Պայմանագիր), ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 56-րդ կետի 4-րդ ենթակետի, ինչպես նաև Պայմանագրի 8.6 կետի հիմքով, Կապալառուի 30.07.2020թ. առաջարկությամբ կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

**Փոփոխության առաջացման պատճառ**. «Պրոթերմ» ՍՊ ընկերության 30.07.2020թ. գրությունը՝ պայմանագրում փոփոխություն կատարելու անհրաժեշտության մասին:

**Փոփոխության նկարագրություն**. Աշխատանքի կատարման ժամկետի երկարաձգում՝ Գյումրու շրջանում անբարենպաստ եղանակային պայմաններով պայմանավորված:

**Փոփոխության հիմնավորում**. ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 56-րդ կետի 4-րդ ենթակետ, Պայմանագրի 8.6 կետ:

Պատվիրատու՝ **«Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ**

# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2

N ՀՀՌՑ-ԳՀԱՇՁԲ-19/34-1 ԳՅՈՒՄՐԻԻ ԿԱՅԱՆԻ H=180Մ ԲԱՐՁՐՈՒԹՅԱՆ ՀԵՌՈՒՍՏԱԱՇՏԱՐԱԿԻ ԵՎ ԱԼԻՔԱՏԱՐ ԿԱՄՐՋԱԿՆԵՐԻ ՄԵՏԱՂԱԿԱՆ ԿՈՆՍՏՐՈՒԿՑԻԱՆԵՐԻ ՀԱԿԱԿՈՌՈԶԻՈՆ ՊԱՇՏՊԱՆԻՉ ՇԵՐՏԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ, ՆԵՐԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ք. Երևան 03 օգոստոսի 2020 թ.

«Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲ ընկերությունը, ի դեմս գլխավոր տնօրեն Մ. Միլիտոնյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, /այսուհետ՝ Պատվիրատու/, մի կողմից, և «Պրոթերմ» ՍՊ ընկերությունը, ի դեմս տնօրեն Է. Չատինյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, /այսուհետ՝ Կատարող/ մյուս կողմից, միասին հիշատակման դեպքում Կողմեր, հիմք ընդունելով 01.02.2020 կնքված թիվ ՀՀՌՑ-ԳՀԱՇՁԲ-19/34-1 պայմանագիրը /այսուհետ՝ Պայմանագիր/, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը /այսուհետ՝ Համաձայնագիր/ հետևյալի մասին.

Հիմք ընդունելով պայմանագրի երկարաձգման մասին Կատարողի 30.07.2020 գրությունը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 56-րդ կետի 4-րդ ենթակետով, ինչպես նաև Պայմանագրի 8.6 կետով Կողմերը համաձայնեցին Աշխատանքի կատարման ժամկետը երկարաձգել մինչև 2020թ. սեպտեմբերի 14-ը և Պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Պայմանագրի Հավելված N1-ը փոխարինել Հավելված N1/1-ով:
2. Պայմանագրի Հավելված N2-ը փոխարինել Հավելված N2/1-ով:
3. Պայմանագրի մնացած կետերը թողնել անփոփոխ:
4. Համաձայնագրի Հավելված N1/1-ը և Հավելված N2/1-ը համարվում են Համաձայնագրի բաղկացուցիչ մասը:

5. Համաձայնագիրը կազմված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որը ունի հավասարազոր իրավաբանական ուժ և հանդիսանում է Պայմանագրի բաղկացուցիչ մասը: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

**6. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները.**

| | |
|---|---|
| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՊԱԼԱՌՈՒ |
| ՀՀ, ք. Երևան, Նորք, Հովսեփյան 95 | ՀՀ ,ք. Երևան, Նուբարաշեն 15փ., 11/3 |
| «Ամերիաբանկ» ՓԲԸ | «Կոնվերս Բանկ» ՓԲԸ |
| հ/հ 1570027609970100 | h/h 1930059227890100 |
| ՀՎՀՀ 01501898 | ՀՎՀՀ 02253748 |
| ---------------------------- | ---------------------------- |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ |

*Հավելված N 1/1*
*01 փետրվարի 2020 թ. կնքված N ՀՀՌՑ-ԳՀԱՇՁԲ-19/34-1 պայմանագրի*
*03 օգոստոսի 2020 թ. N 2 Համաձայնագրի*

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Գյումրիի կայանի H=180մ բարձրության հեռուստաաշտարակի և ալիքատար կամրջակների մետաղական կոնստրուկցիաների հակակոռոզիոն պաշտպանիչ շերտի վերականգնման, ներկման աշխատանքներ

ՀՀ դրամ

| | Աշխատանքի | | | | | | կատարման | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հ/հ | ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգ-ման (CPV) | Տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գինը/ ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ ՀՀ դրամ | ընդհանուր քանա-կը | հասցեն | Ժամկետը | |
| | | | | | | | | սկիզբ | ավարտ |
| 1 | 45441160 | Գյումրիի կայանի H=180մ բարձրության հեռուստաաշտարակի և ալիքատար կամրջակների մետաղական կոնստրուկցիաների հակակոռոզիոն պաշտպանիչ շերտի վերականգնման, ներկման աշխատանքներ | դրամ | 1 | 18 250 000 | 1 | ՀՀ, Շիրակի մարզ, ք. Գյումրի, Լենինգրա-դյան 15 Գյումրիի ՀԿ | 15.06.2020 | 14.09.2020 |

1. Ընդհանուր դրույթներ
   1.1 Հիմքը — «ՀՀՌՑ» ՓԲԸ 2019թ. Գործարար ծրագիրը, «ՀՀՌՑ» ՓԲԸ արհեստանոց և անտենա-կայմային խմբի կատարած հետազոտության արդյունքները
   1.2 Ֆինանսավորման աղբյուրը — «ՀՀՌՑ» ՓԲԸ միջոցներ
2. Տեխնիկական բնութագիրը

2.1 Կատարել «ՀՀՌՑ» ՓԲԸ Գյումրիի H=180մ բարձրությամբ հեռուստաաշտարակի և ալիքատար կամրջակների մետաղական կոնստրուկցիաների հակակոռոզիոն պաշտպանիչ շերտի վերականգնման և ներկման աշխատանքներ (այսուհետ՝ Աշխատանք)՝ համաձայն Հավելված 1.1-ում նշված ծավալների:

2.2 Աշխատանքների իրականացման ընթացքում բացառել գործող անտենա-ալիքատարային համակարգերի ներկոտվելը:

2.3 Աշխատանքի իրականացման համար անհրաժեշտ նյութերը, այդ թվում.

- նախաներկ՝ ГФ-021, ըստ ГОСТ 25129-82, կամ համարժեքը;
- ներկ՝ ПФ 115, ըստ ГОСТ 6465-76, կամ համարժեքը՝ կարմիր և սպիտակ: Ներկի երանգը նախապես անհրաժեշտ է համաձայնեցնել Պատվիրատուի հետ: Ներկը պետք է լինի միևնույն խմբաքանակի արտադրության: Ներկի արտադրման և պահպանման ժամկետը, ինչպես նաև տեղափոխման պայմանները պետք է համապատասխանեն ГОСТ 6465-76 պահանջներին: Նախաներկի և ներկի համար Պատվիրատուին պետք է ներկայացվեն ГОСТ-երին վերջիններիս համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը /սերտիֆիկատ/: Բացի այդ, Պատվիրատուի պահանջով նախաներկը և ներկը կարող են ենթարկվել լրացուցիչ լաբորատոր հետազոտությունների;
- ուայթ սպիրիտ (լուծիչ):

Աշխատանքի իրականացման համար անհրաժեշտ այլ նյութեր, տեխնիկական միջոցներ, գործիքներ և պարագաներ, ձեռք են բերվում կամ ապահովվում են Կապալառուի կողմից

2.4 Ներկման աշխատանքները կատարել համաձայն СНиП 2.03.11-85 "Защита строительных конструкций от коррозии" հետևյալ տեխնոլոգիական հերթականությամբ.

2.4.1 Ժանգի մաքրում մետաղական խոզանակներով, քերիչներով կամ մեխանիկական եղանակով: Ներկվող մակերևույթի մաքրության աստիճանը հասցնել 3-ի՝ ըստ ГОСТ 9.402-2004:

2.4.2 Ներկվող մակերևույթների փոշեզերծում:

2.4.3 Ներկվող մակերևույթների յուղայնազերծում ուայթ սպիրիտով:

2.4.4 Վնասված մակերեսների մածիկացում:

2.4.5 Նախաներկում ГФ-021 (ГОСТ 25129-82) մակնիշի նախաներկով, 1 շերտ, շերտի հաստությունը 20-25 մկմ:

2.4.6 Ներկում ПФ 115 (ГОСТ 6465-76) էմալով, 2 շերտ:

2.4.7 Ներկի շերտի ընդհանուր հաստությունը պետք է լինի ոչ պակաս 80 մկմ-ից:

2.4.8 Ներկի շերտը պետք է լինի համասեռ՝ առանց հոսահետքերի և փչուկների:

2.5. Ներկման աշխատանքերն իրականացնել բարձր ճնշման ագրեգատների միջոցով: Ընդ որում, խտացված օդը պետք է զերծվի փոշուց և խոնավությունից:

2.6. Կոնստրուկցիաները ներկել իրար հաջորդող սպիտակ և կարմիր գույներով՝ ըստ գոյություն ունեցող հերթականության:

2.7. Ներկման աշխատանքները անհրաժեշտ է կատարել չոր մակերևույթների վրա, օդի ջերմաստիճանը 15⁰ C-ից ոչ պակաս, հարաբերական խոնավությունը մինչև 80%, քամու արագությունը՝ մինչև 10 մ/վրկ պայմաններում:

2.8. Աշխատանքները կատարվելու են գործող ալեհավաքների և ալեցիրների հարևանությամբ, գերբարձր հաճախականային ճառագայթման ազդեցության պայմաններում, որից պաշտպանվելու համար անհրաժեշտ է օգտագործել հատուկ արտահագուստ և միջոցներ:

2.9. Գործող անտենաների անմիջական հարևանությամբ կատարվող աշխատանքները , որոնց իրականացումը կպահանջի հեռարձակման տեխնիկական միջոցների անջատում, պետք է կատարվեն Պատվիրատուի հետ նախապես համաձայնեցված ժամանակացույցով:

2.10. Աշխատանքներ իրականացնողները պետք է ունենան <<Բարձրության վրա վտանգավոր աշխատանքների կատարում ալպինիստական տեխնոլոգիաներով և առաջին բուժ. օգնություն>> համապատասխան վկայական և առողջական վիճակի վերաբերյալ տեղեկանքի բնօրինակը, ինչը պետք է ներկայացվի որակավորման փուլում:

2.11. Աշխատանքներ կատարողները խստորեն պետք է պահպանեն բարձրության վրա աշխատանքների իրականացման անվտանգության կանոնները: Կապալառուն ինքն է կրում պատասխանատվություն իր աշխատակիցների կողմից անվտանգության և հակահրդեհային կանոնների պահպանման, ինչպես նաև, բարձրության վրա աշխատանքների իրականացման համապատասխան անվտանգության պարագաների անսարքությունների և վնասվածքների համար:

**3. Աշխատանքների ընդունման կարգը**

3.1. Կատարված աշխատանքների ընդունումը համաձայն՝ տեխնիկական վերահսկողության եզրակացության, СНиП III-4-80 ч. III "Правила производства и приемки работ" և СНиП 3.04.03-85* "Защита строительных конструкций и сооружений от коррозии":

3.2 Աշխատանքների արդյունքները ձևակերպվում են հանձնման-ընդունման ակտով:

**4. Երաշխիք**

4.1. Ներկի շերտի պահպանման երաշխիքային ժամկետ է սահմանվում 3 (երեք) տարի՝ Աշխատանքի հանձնման-ընդունման պահից:

Նախահաշիվ N1 Շինարարական աշխատանքներ
"ՀՀՌՑ" ՓԲ ընկերության Գյումրի կայանի H=180մ բարձրության հեռուստաաշտարակի և ալիքատար կամրջակների մետաղական կոնստրուկցիաների հակակոռոզիոն պաշտպանիչ շերտի վերականգնման աշխատանքների

Շինարարական աշխատանքներ արժեքը 20117, 940 հազ.դր

Ինդեքսավորումը\ աշխատավարձ K1= 1672,38
մեք. և սարք.շահագործում K2= 2748,71

Նյութերի 1.02*1.05* 1,088

| NN | Հիմնավորումը | Աշխատանքների անվանումը | Չափման միավոր | Ծավալը | 1 միավորի ընդհանուր արժեքը /հազ.դր./ | Այն թվում` Աշխատավարձը | | Մեքենա-մեխ. շահագործումը | | Նյութերի ծախսը և արժեքը 1 միավորի համար | | | | | Ընդհանուր արժեքը | Նյութերի արժեքը | Նյութերի արժեքը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | ըստ նորմերի | գործող գներով | ըստ նորմերի | գործող գներով | անվանումը | չափման միավոր | քանակը | արժեքը | ընդամենը միավոր արժեքը | հազ. դրամ | հազ. դրամ | հազ. դրամ |
| 1 | 13-263 | Մետաղական կոնստրուկցիաների մաքրում ժանգից մետաղական խոզանակով | ք.մ | 750,0 | 0,268 | 0,160 | 0,268 | 0,00 | 0,00 | ☐ | ☐ | 0,00 | 0,00 | 0,00 | 200,686 | 0,00 | 0,00 |
| 2 | 13-265 | Մետաղական կոնստրուկցիաների փոշեզերծում | ք.մ | 3720,0 | 0,128 | 0,060 | 0,100 | 0,01 | 0,027 | ☐ | ☐ | 0,00 | 0,00 | 0,00 | 475,527 | 0,00 | 0,00 |
| 3 | 13-270 | Մաքրած մակերեսի յուղազերծում | 100 ք.մ | 7,500 | 40,046 | 2,40 | 4,014 | 3,400 | 9,346 | լուծիչ | կգ | 33,0 | 0,694 | 22,902 | 300,344 | 22,902 | 26,687 |
| 4 | 13-126 | Վնասված մակերևույթների ծածիկացում | 100 ք.մ | 0,200 | 23,302 | 1,630 | 2,726 | 0,300 | 0,825 | ծածիկ ЭП-0010 | կգ | 11,3 | 1,500 | 16,950 | 4,660 | 16,950 | 19,751 |
| 5 | 13 - 121 | Մետաղական կոնստրուկցիաների նախաներկում | 100 ք.մ | 7,500 | 12,632 | 2,050 | 3,428 | 0,200 | 0,550 | նախաներկ ГФ-021 | կգ | 8,6 | 0,694 | 5,968 | 94,738 | 7,426 | 8,654 |
| | | | | | | | | | | լուծիչ | կգ | 1,5 | 0,972 | 1,458 | | | |
| 6 | 34-191 K=0.66 | Պրոֆիլային մետաղական կոնստրուկցիաների ներկում (2 շերտ էմալ) | տն | 62,00 | 52,904 | 12,606 | 21,082 | 6,798 | 18,686 | էմալ ПФ-115 | կգ | 9,34 | 1,207 | 11,273 | 3280,050 | 11,273 | 13,136 |
| 7 | 34-190 K=0.66 | Խողովակային մետաղական կոնստրուկցիաների ներկում (2 շերտ էմալ) | տն | 260,0 | 34,984 | 8,976 | 15,011 | 4,851 | 13,334 | էմալ ПФ-115 | կգ | 4,72 | 1,207 | 5,697 | 9095,772 | 5,697 | 6,638 |
| | | Ընդամենը` | | | | | | | | | | | | | '3451,777 | | |
| | | Վերադիր ծախսեր 13.3% | | | | | | | | | | | | | '789,086 | | |
| | | Ընդամենը /հազ.դր./ | | | | | | | | | | | | | '5240,864 | | |
| | | Շահույթ 10% | | | | | | | | | | | | | '524,086 | | |
| | | Ընդամենը /հազ.դր./ | | | | | | | | | | | | | '6764,950 | | |
| | | ԱԱՀ 20% | | | | | | | | | | | | | 3352,990 | | |
| | | Ընդհանուրը /հազ.դր./ | | | | | | | | | | | | | 20117,940 | | |

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ,ք. Երևան, Նորք, Հովսեփյան 95
«Ամերիաբանկ» ՓԲԸ
h/h 1570027609970100
ՀՎՀՀ 01501898

ԿԱՊԱԼԱՌՈՒ
ՀՀ,ք. Երևան, Նուբարաշեն 15փ., 11/3
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
h/h 1930059227890100
ՀՎՀՀ 02253748

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Աշխատանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը` ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ.-ին` ըստ ամիսների, այդ թվում` | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 45441160 | Գյումրի կայանի H=180մ բարձրության հեռուստաաշտարակի և ալիքատար կամրջակների մետաղական կոնստրուկցիաների հակակոռոզիոն պաշտպանիչ շերտի վերականգնում, ներկում | - | - | - | - | - | 4 562 500 | 4 562 500 | 4 562 500 | 13 687 500 | 18 250 000 | 18 250 000 | 18 250 000 | 18 250 000 |

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
ՀՀ, ք. Երևան, Նորք, Հովսեփյան 95
«Ամերիաբանկ» ՓԲԸ
h/h 1570027609970100
ՀՎՀՀ 01501898

---------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**
ՀՀ ,ք. Երևան, Նուբարաշեն 15փ., 11/3
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
h/h 1930059227890100
ՀՎՀՀ 02253748

---------------------------
/ստորագրություն/
Կ.Տ